ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, ինչպես նաև 99-րդ հոդվածով և 149-րդ հոդվածի 1-ին մասով, Ձեզ ենք ներկայացնում «Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Որոշման նախագծին կից ներկայացում ենք՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության որոշումը՝ «Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» որոշման նախագիծ ներկայացնելու վերաբերյալ և հիմնավորումը:

Նախագծի հիմնական զեկուցողն է պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանը:

Խնդրում ենք ներկայացված որոշման նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

30.06.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով, ինչպես նաև 99-րդ հոդվածով և 149-րդ հոդվածի 1-ին մասով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն իր 2022 թվականի հունիսի 28-ի նիստում

Ո Ր Ո Շ Ե Ց

1.Հանդես գալ որոշում ներկայացնելու նախաձեռնությամբ եւ շրջանառության մեջ դնել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր «Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

2.Նախագծի հիմնական զեկուցող նշանակել պատգամավոր Արուսյակ Ջուլհակյանին:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀԱՅԿ ԿՈՆՋՈՐՅԱՆ**

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

28.06.2022թ.

095, Երևան, Մ. Բաղրամյանի պող., 19 Հեռ.՝ (374 11) 513 281

Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆԻՑ ՀԵՏ ԿԱՆՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Առաջնորդվելով Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասով և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 149-րդ հոդվածով՝

Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին հետ կանչել Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա. ՍԻՄՈՆՅԱՆ**

2022թվական, հուլիսի —

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

(Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ որոշման նախագծի)

Հայաստանի Հանրապետության ութերորդ գումարման Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) պատգամավոր Իշխան Սաղաթելյանն ընտրվել է Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնում Ազգային ժողովի 06.08.2021 թվականի որոշմամբ1: «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը կողմ է քվեարկել Իշխան Սաղաթելյանի թեկնածությանը՝ հարգելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրությունը և ի գիտություն ընդունելով ՀՀ Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Այս որոշումը կայացնելիս ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն առաջնորդվել է խորհրդարանում կառուցողական մթնոլորտ, Ազգային ժողովի բոլոր մարմինների բնականոն ձևավորումը և, ըստ այդմ Ազգային ժողովի բնականոն գործունեությունը որպես առաջ ապահովելու նպատակով2:

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 137-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկի թեկնածուն կարող է առաջադրվել միայն ընդդիմադիր խմբակցության կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Միաժամանակ հարկ է արձանագրել, որ ՀՀ Սահմանադրական դատարանի 2021թ. ապրիլի 13-ի թիվ ՍԴՈ-1587 որոշմամբ Սահմանադրական դատարանը, վերլուծելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի՝ Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նախագահների թեկնածուների առաջադրմանն ու ընտրությանը և Ազգային ժողովի նախագահի, նրա տեղակալների, ինչպես նաև մշտական հանձնաժողովների նախագահների հետ կանչմանը և վերջիններիս լիազորությունների դադարեցմանը վերաբերող դրույթները, հանգել է այն եզրակացության, որ չնայած նրան, որ նշված պաշտոններում առաջադրման իրավունք ունեն կոնկրետ խմբակցությունները, նշված պաշտոններից հետ կանչման և լիազորությունների դադարեցման մասին Ազգային ժողովի որոշման նախագիծ ներկայացնելու իրավունքով օրենսդիրն օժտել է հավասարապես բոլոր խմբակցություններին3:

---

[1] http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=7755

[2] http://www.parliament.am/transcript.php?AgendaID=4227&day=05&month=08&year=2021&lang=arm#05.08.2021

[3] https://concourt.am/decision/decisions/sdv-1587.pdf

Ըստ այդմ՝ ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը հանդես է գալիս Ազգային ժողովի նախագահի տեղակալ Իշխան Սաղաթելյանին իր պաշտոնից հետ կանչելու նախաձեռնությամբ:

Հարկ է արձանագրել, որ Ազգային ժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի տեղակալի ընտրության, ինչպես նաև նրանց լիազորությունների դադարեցման հարաբերությունները կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թե՛ ընտրության և թե՛ լիազորությունների դադարեցման գործընթացները գտնվում են բացառապես Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների կայացման և Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տիրույթներում: Այսպես՝

1. Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնում ընտրվելու համար նախատեսված չեն առանձին պահանջներ կամ չափանիշներ, որոնց պետք է բավարարի թեկնածուն:
2. Ազգային ժողովի կողմից իր կազմից ընտրվող Ազգային ժողովի նախագահի և Ազգային ժողովի նախագահի տեղակալների համար նախատեսված չեն առանձին հիմքեր ի տարբերություն օրինակ՝ Ազգային ժողովի պատգամավորի,[4] Սահմանադրական դատարանի դատավորի,[5] դատավորների դեպքում:[6]
3. Ազգային ժողովի նախագահի և նրա տեղակալների լիազորություններն այդ պաշտոնում դադարեցնելու (հետ կանչելու) դեպքում օրենսդրությամբ պարզապես ամրագրվում է, որ դրա համար պետք է փակ գաղտնի քվեարկությամբ ընդունվի Ազգային ժողովի որոշում, ինչպես նաև սահմանվում է որոշման ընդունման համար պատգամավորների անհրաժեշտ ձայների քանակը:[7]

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ազգային ժողովի նախագահի, Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնների դեպքում թե՛ սահմանադրի, թե՛ օրենսդրի կողմից արտահայտվել է հստակ կամք՝ ձեռնպահ մնալ այդ պաշտոններում անձանց լիազորությունների դադարեցման (հետ կանչելու) առանձին հիմքեր սահմանելուց՝ այդ հարցերը թողնելով Ազգային ժողովի խմբակցությունների քաղաքական որոշումների և ընդհանուր առմամբ Ազգային ժողովի կողմից սեփական գործունեության կազմակերպման տիրույթներում:

---

[4] Սահմանադրության 98-րդ հոդվածի 2-րդ մաս

[5] Սահմանադրության 164-րդ հոդվածի 8-րդ մաս

[6] Տե՛ս 3-րդ հղումը

[7] «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 4-րդ մաս, 149-րդ հոդվածի 3-րդ մաս

«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահն ունի երեք տեղակալ, որոնք Ազգային ժողովի նախագահի հանձնարարությամբ նախագահում են Ազգային ժողովի նիստերը, նախագահում են Խորհրդի նիստերը, փոխարինում են Ազգային ժողովի նախագահին կամ իրականացնում Ազգային ժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ հանձնարարություններ:

Ազգային ժողովի Կանոնակարգ սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալները մասնակցում են Խորհրդի նիստերին:

Այսպիսով՝ Իշխան Սաղաթելյանը 2022թ.-ի հունվարի 17-ից առ հունիսի 29-ը ներառյալ, այսինքն՝ 2022թ. առաջին օրացուցային կիսամյակի նիստերի թվով 342 քվեարկություններից ունեցել է թվով 198 բացակա:

8-րդ գումարման Ազգային ժողովի խորհուրդը իր ձևավորման պահից, այսինքն՝ 2021թ. օգոստոս ամսից առ այսօր գումարել է թվով 25 նիստ: Ազգային ժողովի նախագահի տեղակալ Իշխան Սաղաթելյանը նշված 25 նիստերից ներկա է եղել միայն 7 նիստի: Բացակայել է Ազգային ժողովի խորհրդի 18 նիստերից, որոնցից 11-ը՝ 8-րդ գումարման առաջին օրացուցային կիսամյակի, իսկ 7-ը՝ երկրորդ օրացուցային կիսամյակի ընթացքում:

Այսպիսով՝ թե՛ Ազգային ժողովի լիագումար նիստերից և թե՛ Ազգային ժողովի խորհրդի նիստերից հաճախակի բացակայությունների պատճառով չի կատարել իր անմիջական պարտականությունները:

Իշխան Սաղաթելյանի հաճախակի բացակայությունների պատճառով նաև անհնարին է դարձել վերջինիս Ազգային ժողովի նախագահի կողմից հանձնարարություններ տալը և լիազորությունների պատվիրակումը, ինչի հետևանքով նաև չեն իրացվել Ազգային ժողովի կանոնակարգ սահմանադրական օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմերը:

Հարկ է արձանագրել, որ ինչպես ՀՀ ազգային ժողովի նախագահը, այնպես էլ վերջինիս տեղակալները ներկայացնում են ողջ Ազգային ժողովը, բոլոր պատգամավորներին, կոչված են ապահովելու Ազգային ժողովի բնականոն գործունեությունը, համերաշխություն ապահովելու ինչպես Ազգային ժողովի, այնպես էլ հանրության շրջանում: Այնինչ, պարոն Սաղաթելյանը ոչ միայն չի կատարել համերաշխության ապահովմանն ուղղված իր առաքելությունը, այլ նաև հրահրել է բախումներ, օգտագործել ատելության խոսք, վիրավորել հանրության տարբեր ներկայացուցիչների, Ազգային ժողովի պատգամավորների:

Մասնավորապես 2022թ.-ի հունիսի 3-ին Իշխան Սաղաթելյանի դրդմամբ երթի մասնակիցները փորձել են ճեղքել Պռոշյան- Դեմիրճյան փողոցների խաչմերուկում գտնվող ոստիկանական շղթան:

«Կանայք և աղջիկները թող էս կողմ գան, էս փողոցը հենց հիմա պտի բացվի, մեր դիմաց փակ փողոց չկա: Գնացինք փողոցը բացելու»: Իշխան Սաղաթելյանի այս կոչին հաջորդել են զանգվածային անկարգություններ, երթի մասնակիցները, չենթարկվելով ոստիկանների օրինական պահանջին, քարերով, մետաղյա ձողերով, շշերով, ինչպես նաև այլ առարկաներով հարվածներ են հասցրել ոստիկաններին[8]: Հրահրված բախման հետևանքով բուժհաստատություններ է դիմել թվով 60 անձ, որոնցից 39-ը ոստրկանության ծառայողներ:

Բախումներ հրահրելու այլ դրվագներ.

- Մայիսի 2. Խփեք, բրթեք, 4 յանից ցեպ տվեք. ցուցարարները սկսեցին հրել ոստիկաններին Իշխան Սաղաթելյանի կոչից 9 հետո:
- Մայիսի 2. Իշխան Սաղաթելյանը կոչ է անում 10 շրջափակել Ոստիկանության ավտոմեքենան, որից հետո քաշքշուկ ու բախում է տեղի ունենում:
- Մայիսի 3. «Էս փողոցը հենց հիմա պետք է բացվի, մեր դիմաց փակ փողոց չկա»,
  հայտարարել է Իշխան Սաղաթելյանը, ինչից հետո Կառավարական ամառանոցի մոտ բախում է տեղի ունեցել ոստիկանների և ցուցարարների միջև:
- Մայիսի 4. Բախում ոստիկանների եւ ցուցարարների միջեւ Բաղրամյան պողոտայում՝ Իշխան Սաղաթելյանի՝ ոստիկանական պատը հրելով բացելու կոչից 12 հետո:
- Մայիսի 18. Իշխան Սաղաթելյանը վրդովված հարձակվում է ոստիկանների վրա, հրահրում քաշքշուկ13:
- Մայիսի 30. Իշխան Սաղաթելյանը բախում է հրահրում 14 ոստիկանների հետ՝ հրելով և քաշքշելով ոստիկանին:

Վիրավորանքի, ատելության խոսքի, սպառնալիքի դրվագներ.

- Ապրիլի 24. «Ով ասում է, թե մենք պատերազմ ենք բերելու, անբարոյականի վաստակ է15»:

---

[8] https://www.youtube.com/watch?v=nQCfCPf2PRk
[9] https://www.youtube.com/watch?v=qevw9c4ADTg
[10] https://www.youtube.com/watch?v=HrWY!ODo9Os
[11] https://www.youtube.com/watch?t=15285
[12] https://www.youtube.com/watch?t=5
[13] https://www.youtube.com/watch?t=48
[14] https://www.youtube.com/watch?v=nJGo7fRs0og
[15] https://www.youtube.com/watch?t=3

- Ապրիլի 29. «Միասին սրանց շատ կարճ ժամանակում ուղարկելու ենք գրողի ծոցը[16]»:
- Մայիսի 1. «*Տղերք, Նիկոլը փախնելու ա, կամ եթե խոսք ա տվել, որ ձեզ փրկելու ա, էդ իրա նավի մեջ էդքան անասուն չի տեղավորվի, որ հետը տանի*[17]»:

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ Իշխան Սաղաթելյանը չի կատարում և չի ցանկանում կատարել որպես ՀՀ ազգային ժողովի նախագահի տեղակալ ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով իրեն վերապահված գործառույթները:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը Ազգային ժողովի պատգամավոր Իշխան Սաղաթելյանին Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնից հետ կանչելու վերաբերյալ որոշման ընդունմամբ նպատակ ունի հեռուստայում ընտրելու Ազգային ժողովի նախագահի՝ ընդդիմության կողմից առաջադրված այնպիսի տեղակալի, որը կկատարի իր պարտականությունները հավուր պատշաճի, ապահովելով Ազգային ժողովի բնականոն գործունեությունը, ինչի մասին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորները խոսել են դեռևս ԱԺ նախագահի տեղակալի թեկնածու Իշխան Սաղաթելյանի ընտրության ժամանակ՝ հույս հայտնելով, որ ընդդիմադիր խմբակցության կողմից առաջադրված Ազգային ժողովի նախագահի տեղակալը կկատարի ՀՀ Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով սահմանված պարտականությունները, ինչը Իշխան Սաղաթելյանը ձախողել է:

[16] https://www.youtube.com/watch?t=427
[17] https://www.youtube.com/watch?t=100